Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի № 23 արձանագրային որոշման 3-րդ կետի պահանջի հիմքերով <<Ընդդեմ գենդերային բռնության>> ազգային ծրագրի շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից 2013թ. ընթացքում կատարված աշխատանքների

№	Միջոցառման անվանումը	Կատարած աշխատանքները	Ֆինանսավորման աղբյուրը
1.	ՀՀկառավարության <<Ընդդեմ գենդերային բռնության>> ազգային ծրագրի քննարկում և մարզպետարանին առաջադրվող խնդիրներ	Քննարկվել է մարզխորհրդի նիստում, հանձնարարական է տրվել համայնքների ղեկավարներին՝ պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան՝ համայնքներում ընտանեկան բռնության ենթարկված կանանց և երեխաների վերաբերյալ, առաջարկվել կոնկրետ օգնության ձևեր բռնության հետևանքները հաղթահարելու և հետագա բռնությունները կանխելու համար:	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	Մարզում գենդերային բռնության ենթարկված անձանց բացահայտում և վիճակի վերլուծություն	Բռնության դեպքեր են բացահայտվել Եղեգիսում, Արտաբույնքում և Գողթանիկում: Բռնության պատճառ է հանդիսացել ալկոհոլի չարաշահումը, սոցիալական խնդիրները: Առաջինի դեպքում ձեռնարկվել են բուժպրոֆիլակտիկ միջոցներ, երկրորդի դեպքում՝ ցուցաբերվել համապատասխան ֆինանսական օգնություն:	Ֆինանսավորում չի պահանջվել
3.	Մամուլի միջոցով գենդերային բռնության բոլոր ձևերի լուսաբանում և իրազեկում	Մարզային << Վարդաձոր >> թերթի միջոցով տարվել է լայն բացատրական աշխատանք, բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տալու հնարավորությունների վերաբերյալ:	Ֆինանսավորում չի պահանջվել
4.	Մարզպետարանում գենդերային բռնության ենթարկվածների խորհրդատվական կենտրոնի ստեղծում	Մարզպետարանում ստեղծվել է խարհրդատվական - տեղեկատվական կենտրոն, որում ընդգրկվել են կանանց հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամներ:	Ֆինանսավորում չի պահանջվել
5.	Գենդերային բռնության բոլոր ձևերի մասին քարոզչության կազմակերպում կրթական հաստատություններում և ծնողական միջավայրում	Մարզի 15 հանրակրթական և 3 առողջապահական հիմնարկներում կազմակերպվել են հանդիպումներ, տարվել համապատասխան քարոզչություն, բաժանվել գրքույկներ և ցուցադրական նյութեր:	Ֆինանսավորում չի պահանջվել

Ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների
պաշտպանության բաժնի պետ՝ Վ.Իսախանյան
14/01/2014